ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 428-Ա

05 օգոստոսի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2018 թվականի օգոստոսի 13-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ և 7-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

05.08.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2025 թ. օգոստոսի -ի
-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության (Այսուհետ՝ Վարչություն) **աշխատանքների իրականացման ծավալների կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝** անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետ:

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) Բարձրագույն կրթություն.
2) հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքաշինության կամ ճարտարագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ.
3) քաղաքաշինության բնագավառում աշխատանքային փորձ.
4) հաշվետվությունների և այլ փաստաթղթերի հետ աշխատելու փորձ .
5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է ռուսերեն կամ անգլերեն լեզուներին:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է **վեց** ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

ա) իրականացնել աջակցություն պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման, պահպանման և օգտագործման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ապահովել անշարժ գույքի օտարման, վարձակալության և պայմանագրերից բխող իրավունքների պետական գրանցման աշխատանքները.

բ) իրականացնել անշարժ գույքի, /շենքեր, շինություններ, հողեր, հողատեսքեր և այլն/ և ենթակառուցվածքների /ջրամատակարարում և ջրահեռացում, գազիֆիկացում, էլեկտրիֆիկացում, բնակարանային տնտեսություն, համատիրություններ, կապ և այլն/ վերաբերյալ համապատասխան տեղեկությունների կազմում և ներկայացում.

գ) իրականացնել աջակցություն Մարզի ենթակառուցվածքների /ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում, էլ. էներգիայի մատակարարում/ գործունեության ոլորտի և մարզային ենթակայության ինքնուրույն ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող համայնքների և այլ կոմունալ ծառայությունների աշխատանքներին

դ) իրականացնել Մարզի համայնքների և մարզային ենթակայության կազմակերպությունների անշարժ գույքի /վարձակալություն, օտարում, դուրս գրում և այլն/ և ենթակառուցվածքների գործունեության հետ կապված գործարքներ.

ե) հավաքագրել պետական սեփականություն հանդիսացող գույքի կառավարման և պահպանման /օգտագործման/ ուղղությամբ կատարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ներկայացնել Վարչության պետին.

զ) ուսումնասիրել Մարզի ենթակառուցվածքների /ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում, էլ. էներգիայի մատակարարում/ գործունեության ոլորտի և մարզային ենթակայության ինքնուրույն ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող համայնքների և այլ կոմունալ ծառայությունների աշխատանքները և դրանց վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել Վարչության պետին.

է) գույքագրել և հաշվառել Մարզի տարածքում պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը, կազմել բնակարանային ծրագրեր, ներկայացնել Վարչության պետին.

ը)կազմել Մարզի համայնքների և մարզային ենթակայության կազմակերպությունների անշարժ գույքի /վարձակալություն, օտարում, դուրս գրում և այլն/ և ենթակառուցվածքների գործունեության հետ կապված գործարքների վերաբերյալ առաջարկություններ և ներկայացնել Վարչության պետին.

թ) նախապատրաստել Վարչության առջև դրված գործառույթներից խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումները և ուղեցույցերը և ներկայացնել Վարչության պետին.

ժ) կազմել և վարչության պետին ներկայացնել Վարչության աշխատանքային ծրագիրը.

ժա) հավաքագրել այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստացված պետական սեփականության, ենթակառուցվածքների գործունեության, բնակարանային ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը և ներկայացնել Վարչության պետին.

ժբ) քննարկել համայնքներից, քաղաքացիներից, կազմակերպություններից ստացված դիմումները և արդյունքները ներկայացնել Վարչության պետին:

2) Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. **Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ**

Փորձագետը **երեք** ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

6. **Աշխատանքի գնահատման չափանիշներ**

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ **երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:**

Աշխատանքը գնահատվում է **երեք** ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշերը սահմանվում են ըստ 4-րդ բաժնի 1-ին կետով սահմանված արդյունքների: Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշերն են՝

ա) պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման, պահպանման և օգտագործման ուղղությամբ կատարվող աշխատանքներն իրականացված են , ապահովված են անշարժ գույքի օտարման, վարձակալության և պայմանագրերից բխող իրավունքների պետական գրանցման աշխատանքները.

բ) անշարժ գույքի, /շենքեր, շինություններ, հողեր, հողատեսքեր և այլն/ և ենթակառուցվածքների /ջրամատակարարում և ջրահեռացում, գազիֆիկացում, էլեկտրիֆիկացում, բնակարանային տնտեսություն, համատիրություններ, կապ և այլն/ վերաբերյալ համապատասխան տեղեկությունները կազմված են.

գ) Մարզի ենթակառուցվածքների /ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում, էլ. էներգիայի մատակարարում/ գործունեության ոլորտի և մարզային ենթակայության ինքնուրույն ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող համայնքների և այլ կոմունալ ծառայությունների աշխատանքները իրականացված են.

դ) Մարզի համայնքների և մարզային ենթակայության կազմակերպությունների անշարժ գույքի /վարձակալություն, օտարում, դուրս գրում և այլն/ և ենթակառուցվածքների գործունեության հետ կապված գործարքներն իրականացված են.

ե) պետական սեփականություն հանդիսացող գույքի կառավարման պահպանման /օգտագործման/ ուղղությամբ կատարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրված է.

զ) Մարզի ենթակառուցվածքների /ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում, էլ. էներգիայի մատակարարում/ գործունեության ոլորտի և մարզային ենթակայության ինքնուրույն ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող համայնքների և այլ կոմունալ ծառայությունների աշխատանքներն

ուսումնասիրվել են և դրանց վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են Վարչության պետին.

է) Մարզի տարածքում պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը, կազմել բնակարանային ծրագրեր գույքագրված են.

ը) Մարզի համայնքների և մարզային ենթակայության կազմակերպությունների անշարժ գույքի /վարձակալություն, օտարում, դուրս գրում և այլն/ և ենթակառուցվածքների գործունեության հետ կապված գործարքների վերաբերյալ առաջարկություններ կազմվել և ներկայացվել են Վարչության պետին.

թ) Վարչության առջև դրված գործառույթներից խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումները և ուղեցույցերը նախապատրաստվել և ներկայացվել են Վարչության պետին.

ժ) Վարչության աշխատանքային ծրագիրը կազմված և վարչության պետին ներկայացված են.

ժա) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստացված պետական սեփականության, ենթակառուցվածքների գործունեության, բնակարանային ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել և ներկայացվել է Վարչության պետին.

ժբ) համայնքներից, քաղաքացիներից, կազմակերպություններից ստացված դիմումները քննարկվել և արդյունքները ներկայացվել են Վարչության պետին:

Ստորագրող՝
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-08-05 12:27:16 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ